ՀՅԴ «ԿՈՎԿԱՍՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ» ՇՈՒՐՋ ԱՌԱՋԱՑԱԾ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՋԵԼՈՅԱՆ Ա. Ռ.

XX դ. սկիզբը շրջադարձային եղավ Ռուսական կայսրության տիրապետության տակ գտնվող ժողովուրդների համար: Երբեմնի հզոր ցարական ինքնակալությունը ցնցումներ էր ապրում: Մոտ 80 տարի առաջ առաջացած ճեղքը[1], որն այդպես էլ չկարողացավ փակել Ռոմանովների դինաստիան, դարասկզբին ստացավ հուժկու ծավալ՝ ընդգրկելով ժողովրդական լայն զանգվածներ: Սակայն, եթե դեկաբրիստները առաջ էին քաշում բարեփոխումների խնդիրը, ապա համառուսական հեղափոխական շարժման առաջնորդ կուսակցությունները՝ ՌՍԴԲԿ-ն և էսէռները, նպատակ էին դրել իսպառ վերացնել միապետությունը և հաստատել սոցիալիստական կարգեր: Տարված լինելով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի գաղափարներով՝ այդ երկու կուսակցությունները, հատկապես դարասկզբին, հեղափոխական ակտիվ գործունեություն ծավալեցին՝ իշխանությունն իրենց ձեռքը վերցնելու համար: Սակայն նրանք հասկանում էին, որ համառուսական հեղափոխությունը պետք է ընդգրկի ողջ կայսրությունը և ոչ թե միայն ռուս ժողովրդին: Այդ իսկ նպատակով, 1904 թ. նոյեմբերին Փարիզում գումարվեց Ռուսական կայսրության հեղափոխական կուսակցությունների առաջին գաղտնի խորհրդաժողովը: Ուշագրավ է այն փաստը, որ հայկական կուսակցություններից հրավիրված էր Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, որը և մասնակցեց խորհրդաժողովին: Հարց է առաջանում. ՀՅԴ-ն, որն իր գոյության մոտ մեկ ու կես տասնամյակների ընթացքում զբաղված էր բացառապես օսմանյան բռնապետության դեմ պայքար մղելով, և իր գլխավոր նպատակն էր համարում Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդիրը, ինչո՞ւ հանկարծ սերտ հարաբերություններ հաստատեց Ռուսաստանի հեղափոխական կուսակցությունների հետ և դրանով իսկ պայքարի երկրորդ՝ Կովկասյան ճակատ բացելու պարտականություն վերցրեց:

Բանն այն է, որ ՀՅԴ-ն արդեն մեկ տարուց ավել ակտիվ գործունեություն էր ծավալել Արևելյան Հայաստանում: 1903 թ. հունիսի 12-ին Նիկոլայ II-ը հրապարակեց հայ եկեղեցու կալվածքները և գույքը առգրավելու մասին հրովարտակը: Դաշնակցության ղեկավարությունն առանց հապաղելու ստեղծեց «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե», որի ղեկավարությունը ստանձնեց Ռոստոմը (Ստեփան Զորյան): Արդեն 1904 թ. Սոֆիայում գումարված ՀՅԴ երրորդ ընդհանուր ժողովը որոշում ընդունեց, որ կուսակցությունը հարկ եղած դեպքում Կովկասում նույնպես կարող է դիմել ահաբեկչության, խաղաղ ցույցերի կամ զինված ապըստամբության: Դաշնակցությունն իր կովկասյան գործունեության

[1] *Խոսքը 1820-ականին ծավալված դեկաբրիստական շարժման մասին է:*

մեջ համերաշխություն էր հայտնում վրաց ֆեդերալիստների, ռուս սոցիալիստ հեղափոխականների (էսէռների) և հեղափոխական այլ կազմակերպությունների հետ[2]:

Կար ևս մի կարևոր պատճառ՝ Ռուսաստանի հեղափոխական կուսակցությունների հետ մերձենալու, Կովկասում ակտիվ գործունեություն ծավալելու և սոցիալիստական կողմնորոշում ընտրելու համար: 1905 թ. հեղափոխության ալիքը տարածվել էր ողջ կայսրությունում՝ ընդգրկելով նաև Արևելյան Հայաստանն ու ընդհանրապես՝ ռուսահայերին: Գնալով աճում էր այն հայերի քանակը, որոնք, ոգեշնչվելով սոցիալիզմի գաղափարներով, ընդունվում էին սոցիալիստական կուսակցությունների շարքերը: Վերջիններիս մեջ հատկապես հոծ զանգված էր կազմում ուսանողությունը: Դաշնակցության ղեկավարները հասկանում էին, որ հին ուղով շարունակելը կնշանակեր զրկվել կովկասահայ լայն զանգվածների աջակցությունից, որը կենսական էր թե՛ կուսակցության, թե՛ Հայ դատի լուծման համար: Հետևապես պետք էր հարմարվել ստեղծված իրադրությանը: Այդ նպատակով, 1905 թ. մայիսին Ժնևում գումարվում է ՀՅԴ խորհուրդը, որը մշակում է Կովկասյան գործունեության նախագիծ: Նախագծում ասվում էր, որ ՀՅԴ-ն այդուհետև Կովկասում ինքնապաշտպանությունից անցնելու է բուն հեղափոխական գործունեության: Նախագծի հեղինակները շեշտում էին, որ՝ «Կովկասյան գործունեության որոշակի ծրագիրը անհրաժեշտ է կռվի ներկա պայմաններում համաձայնության գալու համար մյուս գործող կուսակցությունների հետ»[3]: Ծրագրում նշվում էր. «Հեղափոխական կռվի միջոցով՝ նա (Դաշնակցությունը - Ջ. Ա.) ձգտում է դաշնակցային (ֆեդերատիվ) ռամկավարական մի կազմակերպության ամբողջ Անդրկովկասի համար՝ ամենալայն տեղական ինքնավարությամբ»[4]:

Նախագծում քննադատվում է նաև կապիտալիստական հասարակարգը, և կուսակցությունը հայտարարվում՝ սոցիալիստական: 1905 թ. Հայ Հեղափոխական Դաշնակցության հեղինակությունը Կովկասում ավելի բարձրացավ՝ կապված Նիկոլայ ցարի՝ ազգային գույքը եկեղեցուն վերադարձնելու հրովարտակի և հայ-թաթարական բախումներում կուսակցության ստանձնած՝ հայ ժողովրդի պաշտպանի բավական հաջող դերի հետ: Ցարական իշխանությունը գնալով կորցնում էր իր երբեմնի հզորությունը. ռուս-ճապոնական պատերազմում կրած պարտությունը մեծ հարված էր հասցրել ցարական միապետության հեղինակությանը, երկրի տնտեսությունը քայքայված էր, բնակչությունը, այլևս չունենալով կորցնելու որևէ բան, ակամա նետվում էր հեղափոխության բովի մեջ: 1905 թ. հոկտեմբերյան հրովարտակով, ցարը իր գահը փրկելու համար երկիրը հայտարարեց խորհրդարանական միապետություն, հռչակվեցին մի շարք ազատություններ: Ինչպես մնացած կուսակցությունները, ՀՅԴ-ն նույնպես դուրս եկավ ընդհատակից, սակայն չկարողացավ

---

[2] **Վարանդյան Մ.**, *Հ.Յ. Դաշնակցության պատմություն, Ե., 1992, էջ 403:*

[3] *Նախագիծ Կովկասյան գործունեության, Ժնև, 1906, էջ 2:*

[4] *Նույն տեղում, էջ 5:*

իր ողջ ուժերը ներդնել հեղափոխական շարժման մեջ, քանի որ զբաղված էր թաթարների դեմ ինքնապաշտպանական մարտեր մղելով: Ցարական կառավարության վարած մաքիավելական քաղաքականությունը՝ բաժանի՛ր և տիրի՛ր, Կովկասում խփեց իր ճիշտ նշանակակետին: Այնպիսի մեծ կուսակցության ծրագրի փոփոխումը, ինչպիսին էր Դաշնակցությունը, բնականաբար, չէր կարող տարաձայնություններ չառաջացնել հենց կուսակցության ներսում. «Կովկասյան նախագծի» շուրջ առաջացան երկու ծայրահեղ հոսանքներ՝ ձախակողմյան, որի հետևորդները ստացան «երիտասարդ դաշնակցականներ» և աջակողմյան, որի կողմնակիցներն իրենց գաղափարախոս Միհրանի (Գաբրիել Քեշիշյան) անվամբ ստացան «միհրանականներ» անվանումները:

Ձախակողմյան հոսանքի անդամները, տարված լինելով զուտ սոցիալիզմի գաղափարներով, ՀՅԴ-ից պահանջում էին ծավալել ավելի ակտիվ սոցիալիստական գործունեություն, քանզի, ինչպես նշում է այդ շարժման ղեկավարներից Մրավյանը (Արսեն Ամիրյան),- «Դաշնակցականների գործունեությունն իր մեջ սոցիալիզմի մի հյուլե անգամ չի պարունակել»[5]: «Երիտասարդ դաշնակցականների» մեղադրանքները, ուղղված ՀՅԴ ղեկավարությանը, զուրկ չէին հիմքից, քանի որ «Կովկասյան նախագծում» արծարծված սոցիալիստական գաղափարները, որոնց պիտի հետևեր Դաշնակցությունը, գրեթե ամբողջությամբ մնացին թղթի վրա, նույնիսկ կուսակցության հայտնի գործիչ Միքայել Վարանդյանն է նշում, որ «Դաշնակցության սոցիալիզմը… մնացել է առհասարակ տեսական մարզանքներու աշխարհում, ծրագրի ու գրականության մեջ, և շատ քիչ անգամ իջել է հայ կյանքի ալեծուփ հրապարակը»[6]:

«Երիտասարդ դաշնակցականների» կամ «անջատականների» գլխավոր ներկայացուցիչներն էին՝ Արսեն Ամիրյանը (Մրավյան), Լևոն Աթաբեկյանը (Ռիխարդ), բժիշկ Մ. Ջալյանը և ուրիշներ: Սկզբնական շրջանում նրանք պահանջում էին Դաշնակցության փոփոխում, բյուրեղացում: Մրավյանն ու նրա կողմնակիցները կարծում էին, որ Դաշնակցության Արևելյան (Կովկասյան) բյուրոն պետք է անջատվի Արևմտյանից, որ Արևմտյան Հայաստանի ազատագրման ծրագիրը ծառայում է միայն հայ բուրժուազիայի շահերին, որոնք այդ տարածքն ու իր բնակիչներին դիտում էին որպես նոր առևտրական շուկա: Հետևապես՝ Կովկասի դաշնակցականները պետք է զբաղվեին ռուսական հեղափոխությամբ ու պայքարեին բուրժուազիայի դեմ: «Պետք է կռվել,- գրում է Մրավյանը,- հայ բուրժուազիայի դեմ: Իսկ կռվել բուրժուազիայի դեմ ներկա պայմաններում կարելի է միայն մի ճանապարհով՝ այն է, որ ցույց է տվել Մարքսը»[7]: «Երիտասարդ դաշնակցականների» առումով կուսակցության ղեկավարությունը արտահայտում էր գրեթե նույն կարծիքը, որին հանգում է Գ. Գյոզալյանը. «Դաշնակցությունից ա-

[5] **Մրավյան Ա. (Ամիրյան Ա.)**, *Դաշնակցության կրիզիսը, Վիեննա 1917, էջ 17:*
[6] **Վարանդյան Մ.,** *նշվ. աշխ., էջ 398:*
[7] **Մրավյան (Ամիրյան Ա.),** *Ժամանակն է սթափվելու, Վիեննա, 1906, էջ 9:*

վելի ձախ գտնվող հոսանքի իդեալը հայկական չէ, բայց կարող է լինել, եթե նա ազգայնանա և իր բախտը կապի հայ ժողովրդի բախտի հետ»[8]: Այսինքն, Դաշնակցության սոցիալիզմը տարբերվում էր Մարքսի սոցիալիզմից, կուսակցությունը չէր պատրաստվում ժխտել սահմանների գոյությունն ու հետ կանգնել ազգային ինքնավարություն ձեռք բերելու նպատակից, և ձախակողմյան հոսանքի հետևորդներն իրենց սոցիալիզմը պետք է հարմարեցնեին կուսակցության ծրագրային պահանջներին: Սակայն «Երիտասարդ դաշնակցականները» մինչև վերջ չհրաժարվեցին իրենց գաղափարներից, նրանք շարունակեցին առաջ քաշել պահանջներ, որոնք հավանության չարժանացան կուսակցության ղեկավարության կողմից:

1907 թ. գարնանը Վիեննայում գումարված՝ Հայ Հեղափոխական Դաշնակցության չորրորդ ընդհանուր ժողովը քննարկեց նաև ձախակողմյան հոսանքի առաջադրած երկու բյուրոների անջատման խնդիրը և որոշեց՝ 1. Հետ մղել անջատման առաջարկը: 2. Երկուսի գործունեությունն էլ վարել Հ.Յ.Դաշնակցության դրոշակի և ղեկավարության ներքո[9]: Փաստորեն, վերջնական որոշումը կայացած էր, և «երիտասարդ դաշնակցականներին» կամ «անջատականներին» մնում էր կամ հարմարվել այդ որոշմանը, կամ էլ դուրս գալ կուսակցության շարքերից: Եվ անջատականների մի հոծ զանգված Արսեն Ամիրյանի ու Լևոն Աթաբեկյանի ղեկավարությամբ հեռանում են Հայ Հեղափոխական Դաշնակցությունից ու շուտով 1907 թ. հունիսին հիմնադրում Սոցիալիստ հեղափոխականների (էսէռների) հայկական ճյուղը:

Անջատական շարժման ծավալման գործում իրենց մեծ դերակատարումն ունեցան Ամիրյանն[10] ու Աթաբեկյանը[11]: Առաջինի երկու գրքույկները մեծ ազդեցություն ունեցան այդ շարժման վրա, և նրան է պատկանում «անջատականների» հիմնադրի պատիվը[12]: Մեծ ճանաչում ունեցավ նաև Ռիխարդի՝ «Ինչո՞ւ ենք անջատվում Դաշնակցությունից» գրքույկը, որտեղ հեղինակը շարադրում էր կուսակցությունից դուրս գալու պատճառները, փորձում հիմնավորել Դաշնակցության՝ հակասոցիալիստական, բուրժուական լինելու իր տեսակետը. «Եթե մեր սոցիալիզմը տարբերվում է Դաշնակցության ծրագրի սոցիալիզմից և մշակականությունից, մարքսիզմի ու սոցիալ-հեղափոխականության այն անճարակ խառնուրդից, որը «Դաշնակցության Կովկասյան նախագիծ»անունն է կրում, այն չի տարբերվում այն սոցիալիզմից, որը մենք «Երիտասարդ դաշնակցականներս» մեր գիտակցության շրջանում դավանում էինք դաշնակցութ-

[8] **Գյոզալյան Գ.,** *Հայ քաղաքական մտքի զարգացումը և ՀՅԴ-ն, Փարիզ, 1927, էջ 142:*
[9] *Դրոշակ, Ժնև, 1907, N 5, էջ 70:*
[10] *Արսեն Ամիրյանը Բաքվի 26 կոմիսարների հետ զոհվեց 1918 թ. սեպտեմբերի 20-ին:*
[11] *Լևոն Աթաբեկյանը 1918 թ. ապրելի 2-ին սպանվեց թաթարների ձեռքով:*
[12] *Վեմ, Փարիզ, 1933 (նոյեմբեր-դեկտեմբեր), էջ 92:*

յան շրջանում»[13],- գրում է հեղինակը, ապա ավելացնում.- «Կովկասյան Դաշնակցության մասսան իր հսկայական և գորշ մեծամասնության մեջ ո՛չ գիտակից է, ո՛չ հեղափոխական է, և ո՛չ էլ կազմակերպված»[14]:

«Երիտասարդ դաշնակցականների»՝ կուսակցությունից դուրս գալուց հետո դաշնակցական հայտնի գործիչ Ե. Թոփչյանը անջատականների գաղափարախոսության ու քննադատությունների դեմ դուրս եկավ մի հոդվածով[15], որտեղ փորձում էր ապացուցել Մրավյանի և Ռիխարդի մեղադրանքների անհիմն լինելը: Սակայն իրողությունն այն էր, որ Հայ Հեղափոխական Դաշնակցության ձախակողմյան հոսանքը այլևս, որպես այդպիսին, գոյություն չուներ:

Նույն ժամանակաշրջանում ՀՅԴ շարքերում ծայր առավ մի նոր շարժում, որն ուներ բազում կողմնակիցներ ոչ միայն Կովկասում, այլև համախոհների բավական ստվար զանգված՝ արևմտահայ դաշնակցական գործիչների շրջանում: Այդ հոսանքի հետևորդները, ինչպես նշեցինք, իրենց ղեկավար դաշնակցական խմբապետ Միհրանի անվամբ կոչվում էին միհրանականներ: Միհրանը դաշնակցական հայտնի հայդուկներից էր, ծնունդով Արևմտյան Հայաստանից: Երբ 1905 թ. ընդունվեց Կովկասյան գործունեության ծրագիրը, Միհրանը դեմ արտահայտվեց այդ նախագծին՝ ասելով, որ Հայ Հեղափոխական Դաշնակցությունը պետք է պայքարի միայն արևմտահայ դատի լուծման համար, իսկ Կովկասում վարի ընդամենը ինքնապաշտպանական մարտեր: Կարճ ժամանակամիջոցում Միհրանի դրոշի տակ հավաքվեցին հարյուրավոր դաշնակցականներ, հատկապես մեծ թիվ էին կազմում ֆիդայական կռիվներ մղած ճանաչված հայդուկները (Անդրանիկ, Սեպուհ, Ս. Մուրադ և ուրիշներ), որոնք մտավախություն ունեին, թե Կովկասում հեղափոխության ուղի բռնելով՝ ՀՅԴ-ն Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդիրը կըմղի հետին պլան: Միհրանը դաշնակցական ղեկավարների դեմ գանգատներն արտահայտում էր անկուսակցական, բուրժուական «Մըշակ» թերթում հոդվածներ տպելով: Այդ հոդվածներում նա հայտարարում էր, որ «Կովկասյան նախագիծը» ընդունվել է անօրինական ճանապարհով, հաշվի չի առնվել կուսակցության անդամների կարծիքը, և ընդհանրապես, այդպիսի շրջադարձային որոշումը պետք է ընդունվեր միայն ընդհանուր ժողովի կողմից, այլ ոչ թե դաշնակցական խորհրդի որոշումով: Ըստ Միհրանի, Կովկասյան «անօրինական» նախագիծն ընդունվեց այն պատճառով, «որ ագահությունից դրդված հավատափոխություն են ընդունել մեր շեֆերը: Որպեսզի մարդիկ ձեռքից չփախցնեն… մի՞թե ներելի կլիներ հեղափոխական կազմակերպությանը իր գոյությունը ճոխ ու փարթամ պահելու համար հետևել մարդորսությանը, իհարկե՝ ո՛չ»[16]: Միհրանականները չէին ընդունում հանուն սոցիալիզմի պայքարը, դրա համար էլ

---

[13] **Ռիխարդ (Աթաբեկյան Լ.),** *Ինչո՞ւ ենք անջատվում Դաշնակցությունից (առանց տեղի և թվի), էջ 5:*

[14] *Նույն տեղում, էջ 22:*

[15] **Վահե (Թոփչյան Ե.),** *Անջատվածները, Թիֆլիս, 1907:*

[16] *Մշակ, 5.X.1906:*

ստացան «աջակողմյան» անվանումը: Այսպիսով, Միհրանը ոչ միայն ընդվզում էր երիտասարդ դաշնակցականների՝ «անջատականների», այլև գրեթե ողջ դաշնակցական ղեկավարության դեմ՝ կուսակցության հավատարիմ անդամներ համարելով միայն այն հատվածին, որը ցանկանում էր շարժվել ՀՅԴ-ի հին ծրագրով: Իսկ այդպիսիները քիչ չէին: Ճիշտ է, ՀՅԴ ղեկավարությունը սկզբում փորձում էր ցույց տալ, որ Միհրանական շարժումը կուսակցության համար իրական վտանգ չի ներկայացնում, և Միհրանի գաղափարակիցներն ընդամենը մի փոքրիկ զանգված են կազմում, բայց այդ աջակողմյան հոսանքի ջախջախումից հետո կուսակցության պաշտոնական օրգան «Դրոշակ»-ում հրատարակվեց դիմումների մի մեծ ցանկ, որոնցում դաշնակցական մի շարք խմբեր հայտարարում էին «Ժամանակավոր զինվորական խորհրդից» իրենց դուրս գալու մասին[17]: Մեծ թիվ էին կազմում նաև դաշնակցական այն գործիչները (Անդրանիկը, Մուրադը, Առաքելը, Սեպուհը և այլք), որոնք թեև չէին բարձրաձայնում այդ հոսանքին իրենց հարելու մասին, բայց համոզված էին, որ ՀՅԴ-ն պետք է զբաղվի միայն արևմտահայերին օսմանյան ծանր լծից ազատագրելու խնդրով:

Անդրադառնանք վերը նշված «Ժամանակավոր զինվորական խորհրդին» ու նրա հետապնդած նպատակներին: Միհրանը մտադրված էր Դաշնակցությունը վերադարձնել դեպի նախկին ծրագիրը. դա իրագործելու համար նա հիմնում է մի մարմին, որն ստանում է «Ժամանակավոր զինվորական խորհուրդ» անվանումը: Լինելով զենքի մարդ՝ Քեշիշյանը հասկանում էր, որ ոչ մի դաշնակցական ղեկավար ինքնակամ չի հրաժարվի իր ձգտումներից, եթե համամիտ չէ հին դաշնակցականներին: Եվ ահա նա որոշում է ձերբակալել այդ ղեկավարներին ու Զինվորական խորհրդի դատին հանձնել՝ որպես ՀՅԴ-ի և առհասարակ արևմտահայ դատի դավաճաններ: Սակայն այդ ղեկավարների՝ առանձին-առանձին ձերբակալման գործը գրեթե անհնար էր, ու պետք էր այնպիսի պահ ընտրել, երբ նրանք միևնույն վայրում գտնվեին: Եվ շուտով ստեղծվում է այդ առիթը: Օգտվելով ցարի՝ հոկտեմբերյան հրովարտակով տված ազատություններից, 1906 թ. օգոստոսին Էջմիածնում գումարվում է կենտրոնական ժողով, որտեղ հավաքված 60 պատգամավորներից ընդամենը վեցն էին պատկանում այլ կուսակցությունների (դրանց թվում էին Միհրանին աջակցող մշակականներ Ալ. Քալանթարը և Հ. Առաքելյանը): Այստեղ էին գտնվում կովկասահայ իրականության գրեթե բոլոր ազդեցիկ դաշնակցականները, իսկ ժողովը նախագահում էր Սիմոն Զավարյանը:

Միհրանն իր ամենամտերիմ համախոհներից մեկի՝ Ղազախի հերոս Շխալիի (Ստեփան Մելիք-Մկրտչյան) հետ ուղևորվում է Էջմիածին: Նրանք որոշել էին սեպտեմբերի 1-ին ձերբակալել ժողովի անդամներին և հաստատել Զինվորական դիկտատուրա:Կուսակցու-

[17] *Դրոշակ, 1907, N 6-7, էջ 100:*

թյան ղեկավարումը ամբողջ Կովկասում անցնելու էր «Ժամանակավոր զինվորական խորհրդի» ձեռքը: Միհրանի նախաձեռնությունը կարող էր հաջող ավարտ ունենալ, քանի որ ժողովի անդամները չէին սպասում, թե նա կհամարձակվի այդպիսի քայլի դիմել և նույնիսկ նրա նորաստեղծ Զինվորական խորհուրդը համարում էին արկածախնդրություն ու ծաղրում էին նրա անդամներին[18]: Սպասվող վտանգից ժողովի անդամները փրկվում են Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի հրամանի պատճառով, որը բնավ առնչություն չուներ Միհրանի ծրագրի հետ: Բանն այն է, որ Էջմիածնի գավառապետ Լեմմերմանը ոստիկաններ ուղարկեց և հայտնեց, որ փոխարքայի հրամանով ժողովի անդամները 24 ժամվա ընթացքում պետք է լքեն Էջմիածինը, որը և ի կատար ածվեց (օգոստոսի 29-ին): Այս իրադարձություններից հետո դաշնակցական ղեկավարությունը հասկացավ, որ այդ շարժման անդամները պատրաստ են կտրուկ քայլերի դիմել իրենց նպատակին հասնելու համար, և նրանք սպառնում են կուսակցությանը: Լուրջ պայքար ծավալվեց հատկապես դարասկզբի քարոզչության ամենահզոր զենքի՝ լրագրի միջոցով: Միհրանի հոդվածները մեծ ընդունելություն էին գտնում հայ իրականության մեջ ամենաազդեցիկ թերթերից մեկի՝ «Մշակի» խմբագրատանը: Այն ձեռք էր բերել հակադաշնակցական օրգանի համբավ ոչ միայն Միհրանի, այլև գլխավոր խմբագիր Ալեքսանդր Քալանթարի ու թերթի թղթակից Հ. Առաքելյանի՝ Դաշնակցության դեմ ուղղված քննադատական հոդվածների պատճառով: Իրականում բուրժուական համարվող «Մշակի» նպատակը ոչ թե Միհրանի գաղափարները պաշտպանելն էր, այլ՝ հայ հասարակության մեջ սոցիալիստական գաղափարների ամրապնդման դեմ պայքարելը: Միհրանն իր հոդվածներում շարքային դաշնակցականներին հորդորում էր ընդվզել կուսակցության վարած ներկա քաղաքականության դեմ և հեղաշրջում կատարել ՀՅԴ-ի ներսում: Սակայն չպետք է կարծել, թե նա ցանկանում էր ընդհանրապես լուծարել կուսակցությունը, այլ մտածում էր, որ հասունացել է Դաշնակցության «վերանորոգման» ժամանակը, և «ահա բոպե առ բոպե մոտենում է Դաշնակցության նոր և անարատ դարագլուխը»[19]: Այս քննադատություններին կուսակցության ղեկավարությունը պատասխանում էր թռուցիկների և հատկապես Թիֆլիսի իր օրգանի՝ «Ժամանակ» թերթի միջոցով: Այստեղ «մշակականների» ու «միհրանականների» դեմ դուրս էր եկել ողջ խմբագրակազմը՝ գլխավոր խմբագիր Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ: Թերթում Միհրանը անվանվում էր «ինքնակոչ», իսկ Ժամանակավոր զինվորական խորհուրդը՝ *Միհրանի շայկա»: Հատկապես հայտարարվում էր, որ այդպիսի խորհուրդ գոյություն չունի, հետևապես նրա անդամները իրավունք չունեն շահարկելու Դաշնակցության անունը:

1907 թ. գարնանը Վիեննայում գումարվեց Հայ Հեղափոխական Դաշնակցության չորրորդ ընդհանուր ժողովը, որտեղ վերջնականա-

[18] **Լեո,** *Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ199:*
[19] *Մշակ, 1906., N 181:*

պես հաստատվեց 1905 թ. մշակված «Կովկասյան գործունեության նախագիծը»[20]: Ժողովականները քննեցին նաև միհրանականության հարցը և որոշեցին. «Համարել Միհրանի և «զինվորական խորհրդի» մյուս գործակից անդամների վարմունքը ծանր հանցանք կազմակերպության և նրա պաշտպանած տաճկահայ դատի դեմ և այդ հիման վրա ճանաչել նրանց իսպառ արտաքսված Դաշնակցության շարքերից»[21]: Միևնույն ժամանակ, ընդհանուր ժողովը որոշեց. «Կարգապահական պատիժներու ենթարկել հանցավորները, հանձնելով այդ խնդիրը Դաշնակցության Կովկասյան Ահաբեկիչ մարմնին»[22]: Այսպիսով, Միհրանը ոչ միայն արտաքսվեց դաշնակցության շարքերից, այլև դատապարտվեց մահվան:

Դեռևս 1906 թ. հոկտեմբերի 9-ին դաշնակցականների ձեռքով Թիֆլիսում սպանվել էր Միհրանի կողմնակից Շխալին, իսկ ընդհանուր ժողովի որոշումից անմիջապես հետո միհրանականների դեմ իսկական որս սկսվեց: 1907 թ. հունիսի 10-ին Ահաբեկիչ մարմինը Արմավիրում Միհրանի դեմ մահափորձ կազմակերպեց: Քեշիշյանը վիրավորվեց, իսկ նրա համախոհներ Կոփեցի Խեչոն և Վարդապետյանը սպանվեցին[23]: Նույն թվականի հունիսի 12-ին Թիֆլիսում սպանվեցին Վասիլ Շահնազարյանն ու Մուշեղ Առաքելյանը: Դեկտեմբերի 22-ին Բուլղարիայում սպանվեցին «Շարժում» թերթի խմբագիր Վարդ Պատրիկյանը և այլք:

1909 թ. հոկտեմբերի 11-ին Միհրանի եղբայր Հաբեթը սպանեց դաշնակցական ղեկավարներից մեկին՝ Եղիշե Թոփչյանին: 1910 թ. սեպտեմբերի 6-ին Ռուսաստանից վերադառնալիս վագոնի մեջ ցարական կառավարությանն արած մատնությունների մեղադրանքով սպանվում է Միհրանը, իսկ նրա եղբայր Հաբեթին նույն թվականին Դաշնակցության պահանջով երիտասարդ թուրքերը Էրզրումում կախաղան են բարձրացնում: Այսպիսի վախճան ունեցավ Միհրանական շարժումը:

Այսպիսով, Ռուսական առաջին հեղափոխության տարիներին ձախից և աջից պառակտում տեղի ունեցավ ՀՅԴ շարքերում: Սակայն կուսակցությունը կարողացավ հաղթահարել այդ պառակտումը: 1907 թ. Վիեննայի չորրորդ ընդհանուր ժողովում ընդունվեց նոր ծրագիր՝ կռվել երկու ճակատով՝ Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական, իսկ Ռուսաստանում՝ սոցիալ-դասակարգային:

---

[20] *Ծրագիր Հայ Հեղափոխական Դաշնակցության, Թիֆլիս, 1917:*

[21] *Դրոշակ, 1907, N 5, էջ 78:*

[22] *Դրոշակ, 1907, N 6-7, էջ 103:*

[23] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 4047 (ՊպսՏ Տ տՈՐՅՈՌ ԺՈՔվՈՍՓցՅվ, Ց. 1, թ. 5):*

РАЗНОГЛАСИЯ В АРФД В СВЯЗИ С “КАВКАЗСКИМ ПРОЕКТОМ”

ДЖЕЛОЯН А. Р.

Резюме

Известно, что одним из центров революционного движения, начавшегося в 1905 году в Российской империи, являлось Закавказье. Армянская революционная партия Дашнакцутюн в мае 1905 года разработала “Кавказский проект”, которым заявила о себе как о социалистической партии. Однако изменение программы партии породило разногласия, нашедшие отражение в формировании левостороннего и правостороннего течения внутри партии. Последователи левостороннего течения получили название “молодых дашнаков”. Представителей правостороннего течения называли “миграновцами”. Левое крыло партии являлось поборником активной социалистической деятельности.

Вместе с тем партии удалось разрешить указанные разногласия. IV общее собрание (Вена, 1907 г.) приняло решение о начале национально-освободительной борьбы в Западной Армении и социально-классовой в России.